



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐԵՎԵԼԵԱՆ ԵՐՈՊԱՅԻ  
ARMENIAN CATHOLIC ORDINARIATE OF ARMENIA, GEORGIA AND EASTERNE EUROPE

Prot: 10 /012  
06/02/12

ԵՐԵՎԱՆ

Գերշն. Տէր ՌԱՖԱՅԷԼ Արքեպս. ՄԻՆԱՍԵԱՆ  
Տիտղոսաւոր Արք. Կապադովկեան Կեսարիոյ Հայոց  
Առաջնորդ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելեան Եւրոպայի  
Կաթողիկէ Հայոց

## ՀՈՎՈՒԱԿԱՆ ՆԱՄԱԿ

### ՀՈԳԵԻՈՐ ԴԱՍԻՆ

Յոյժ սիրելի Ծայրագոյն Վարդապետներ, Վարդապետներ, Քահանաներ,  
Սարկաւագներ, Անարատ Յղութեան Հայ Քոյրեր, Մայր Թերեզայի Քոյրեր,  
Փոքր Քոյրեր:

Աստուածային Նախախնամութեամբ եւ Մեծաւորների կամքով  
նշանակուեցի որպէս Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ  
Արեւելեան Եւրոպայի Հայ Կաթողիկէ Առաջնորդ: Այս տիտղոսով  
կոչուեցի դէպի նոր ավեր, Քրիստոսի Սուրբ Եկեղեցուն ծառայելու  
համար: Ծառայութիւնն էլ իր հերթին հրաւիրեց ինձ աշխատանքի եւ  
վկայութեան: Ուստի, այս դրական տրամադրութեամբ է, որ ձեզ եմ  
նուիրում առաջնորդութեանս այս անդրանիկ գրութիւնը, յուսալով, որ



## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐԵՎԵԼԵԱՆ ԵՐՐՈՊԱՅԻ

ARMENIAN CATHOLIC ORDINARIATE OF ARMENIA, GEORGIA AND EASTERNE EUROPE

այն ձեր սրտերում արտացոլելու է սիրոյս անկեղծ արտայայտութիւնն ու համագործակցութեան բարի տրամադրութիւններս:

Թոյլ տուէք, սիրելի Եղբայրներ եւ Քոյրեր, յայտնել ձեզ խոկումներս Քառասնորդացի մասին: Իմացէք, սակայն, որ բացառիկ հոետոր չեմ եւ ո՛չ էլ այդպիսին լինելու յաւակնութիւնն ունեմ: Աղքատ, բայց հաւատացեալ ընտանիքի զաւակ եմ, Զմմառի Արծիւեան Միաբանութեան վանքում անարժանաբար սնած, ուսանած եւ Հայ Ազգիս զաւակների հոգեւոր կարիքներին՝ հոգիների փրկութեանը ծառայելու պատրաստուած:

Այդ իսկ պատճառով, ձեզ եմ ներկայանում որպէս վերջին ժամին հասած մի Եղբայր, որպէսզի ես էլ աշխատեմ Քրիստոսի այգիում եւ օգնեմ ձեզ. ձեզ, որ մեծագոյն ազնուութեամբ աշխատել եւ վեհանձնօրէն նուիրուել էք մինչեւ հիմա:

Վստահելով ձեր վերոյիշեալ յատկութիւններին, կամեցայ գրել ձեզ եւ խնդրել, որ այս Քառասնորդացի ընթացքում միասին խորացնենք, մեր միտքն ու սիրտը հարստացնենք Քրիստոսի կողմից մեզ ընծայուած Նոր Պատուիրանով, որ ասում է. «Նոր պատուիրան եմ ձեզ տալիս. որ սիրէք միմեանց, ինչպէս ես ձեզ սիրեցի, այնպէս էլ դուք սիրեցէք միմեանց: Սրանով բոլորը կ'իմանան, որ դուք իմ աշակերտներն էք» (Յովհ. 13, 34-35):

Այս պատուիրանը Յիսուսն արտասանել է Իր կեանքի ամենակարեւոր պահերից մէկում: Այս պատուիրանը Քրիստոսի կեանքի առանցքային արտայայտութիւններից մէկն է: Նա, երբ տարի տեւած առաքելութիւնից յետոյ, անթիւ անհամար հրաշքներ գործելուց յետոյ, Իր աշակերտներին է հաղորդում Իր սրտի ամենահարազատ եւ մտերիմ զգացումը. «Նոր պատուիրան եմ ձեզ տալիս», ասում է Յիսուսը, «սիրեցէք միմեանց, որպէսզի մարդիկ, որոնց հետ աշխատելու էք, որոնց համար քարոզելու, զոհուելու էք, իմանան, որ դուք Իմ հետեւորդներն էք», այսինքն՝ որ «Ես ձեր մէջ եմ, իսկ դուք՝ իմ մէջ» (Յովհ. 14, 20): Եւ այս իրականութեան համար ձեզ հարկաւոր է մի նոր պատուիրան. Մերոյ պատուիրանը: Մերը գիտենք ի՛նչ է, այն մեր մարդկային բնութեան մէջ ունենք, սակայն երբ Քրիստոսն է այն պատուիրում, տարբեր իմաստ եւ տարբեր նշանակութիւն է ստանում: Այդ իսկ պատճառով, թող որ Պահքի շրջանը դառնայ մեր առօրեայ կեանքի եւ առաքելութեան տրոփող սիրտը:



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐԵՎԵԼԵԱՆ ԵՐՐՈՊԱՅԻ

ARMENIAN CATHOLIC ORDINARIATE OF ARMENIA, GEORGIA AND EASTERNE EUROPE

Ինչպես որ անցելում սովոր էիք Հովուական Նամակ ստանալու Քառասնորդացի սկզբնաւորութեանը, նոյն կերպ այսօր միանում եմ ձեզ՝ պահելու այդ սուրբ աւանդը, ո՛չ վասն սովորութեան, այլ՝ վասն հոգեւոր եղբայրութեան եւ միասնականութեան՝ մեր Փրկչի պատգամի ապրումի մէջ:

### ՔՐԻՍՏՈՍԻ ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ ԻՄ ԿԵԱՆՔՈՒՄ

Երբ Սուրբ Աւետարանում կարդում ենք հետեւեալ նախադասութիւնը. «Ես ձեզ նոր պատուիրան եմ տալիս. որ սիրէք միմեանց ինչպէս ես ձեզ սիրեցի», իսկոյն կենտրոնանում ենք առաջին մասի՝ «որ սիրէք միմեանց»ի վրայ, ինչը որ սխալ չէ: Սակայն, ըստ իմ համեստ կարծիքի, նախընտրում եմ երկրորդ տարբերակն աւելի՝ քան առաջինը, այն տրամաբանութեամբ, որ միմիայն երբ ուշադիր դիտում եմ Քրիստոսի սէրն իմ հանդէպ եւ այդ սիրոյ ցոլացումը իմ կեանքից ներս, այդ ժամանակ է, որ իսկապէս հասկանում եմ, թէ ի՛նչ սիրով պէտք է սիրեմ ընկերոջս:

Քրիստոսի սէրը բազմապիսի պատկերներով է բացայայտում իմ կեանքի մէջ: Օրինակի համար, միայն մի պահ մտածենք մեր առողջութեան մասին. որքա՛ն առողջ ենք, մինչ հազարաւոր մարդիկ տառապում են ահռելի հիւանդութիւններով: Դիտենք ինքներս մեզ. Հաշմանդամ չենք, տխրեղծ կամ դեռած չենք, ի հեճուկս կեանքի բոլոր ցաւերի ու չարչարանքների, ամէն բան ունենք եւ առատօրէ՛ն ունենք: Յաճախ ենք մոռանում Քրիստոսից ստացած առատ շնորհները, մոռանում ենք այն բոլոր հրաշքները, որոնք կատարւում են մեր առօրեայ կեանքից ներս, եւ ստացած սիրոյ պարգեւները արժեւորելու եւ երախտագիտութեամբ գնահատելու փոխարէն՝ ընկնում ենք փորձութիւնների մէջ եւ դրանք փոխարինում ենք ատելութեամբ, ոխակալութեամբ, մեր ընկերոջ, մեր հարազատի, մեր ընտանիքի դէմ անարգանքով ու անիրաւութեամբ: Մեր Փրկչից ձրիօրէն ստացած առատ շնորհների փոխարէն՝ մեր մերձաւորներին տալիս ենք մեր մաղձը: Իսկ երբ ցաւը մօտենում է մեզ, ամբողջ էութեամբ այլայլւում ենք: Ո՞րն է մեր բնութագիրը եւ ո՞րն է մեր նկարագիրը: Արդեօք սա՞ է նոր պատուիրանը, որ Քրիստոսն ակնկալում է մեզնից, ասելով. «Սիրեցէք միմեանց ինչպէս ԵՍ սիրեցի ձեզ»:



## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐԵՎԵԼԵԱՆ ԵՐՐՈՊԱՅԻ

ARMENIAN CATHOLIC ORDINARIATE OF ARMENIA, GEORGIA AND EASTERNE EUROPE

Միրելի եւ անգին Եղբայրներ ու Քոյրեր, ես չեմ ձեր դաստիարակը, այլ ինչպէս քիչ առաջ յիշեցի՝ Քրիստոսի այգու մէջ վերջին ժամի մշակն եմ: Եկել եմ ձեր հետ միասին աշխատելու եւ գործելու միեւնոյն Քրիստոսի փառքի համար, միմեանց օգնելով եւ միմեանց բեռը կրելով, հասնելու համար մեր Տիրոջ յաւիտենական օթեւաններին:

Լիասիրտ վստահ եմ, որ վերոյիշեալ իրականութիւնների շուրջ մտորելով, որոնք մեր կողմից ստացուած բազմահազար շնորհների լոկ փոքրիկ օրինակն են, աւելի երախտագէտ կը լինենք մեր Աստուածային Դաստիարակին՝ Յիսուս Քրիստոսին, եւ գանգատի ու տհաճութեան փոխարէն՝ կը վկայենք մեր ունեցած առատ հարստութեանը:

### ՔՐԻՍՏՈՍԻ ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆՍ ՄԷՁ

Հետեւաբար, երբ գիտակցեմ ունեցածս հոգեւոր հարստութիւնը, իսկոյն կը յիշեմ հինգ քանքարների առակը, որ Մատթէոսը պատմում է իր Աւետարանում (Մատթ. 25, 14): Չեմ ուզում մէկ քանքարի ծառան լինել եւ Տիրոջ կողմից դատապարտուել: Չեմ ուզում ստացածս հարստութիւնը թաքցնեմ սեղանի տակ եւ պարապութեան մատնեմ առաքելական կեանքս: Երբ գիտակցաբար ընդունեմ այն բոլոր հարստութիւնները, որոնք Աստուած պարգեւել է եւ դեռ շարունակում է պարգեւել ինձ, ամենայն ազնուութեամբ կարիքը կը զգամ բաշխելու դրանք բոլոր հաւատացեալներին, որոնք փնտրում են Աստծոյ Արքայութիւնը:

Իմ կոչումը, որպէս հոգեւորական, նմանում է այն ծառային, ով հինգ քանքար ստացաւ եւ դրանք գործի դնելով շահեց հինգ քանքար եւս: Հետեւաբար, առաքելական իմ պատասխանատուութիւնն աւելի մեծ է, քան ուրիշ շա՛տ շատերինը: Քրիստոսի նոր պատուիրանն այստեղ ինձ ամբողջովին դնում է ծանր պարտականութեան տակ: Չեմ կարող Նրա առաքեալը, Նրա վկան դառնալ, եթէ տակաւին չեմ թաթաւուել Իր նոր պատուիրանով, ո՛չ միայն Քրիստոսից տեսնուած շնորհների տուչութեամբ, այլ նաեւ՝ մարդկային տեսանկիւնից դիտուած, այսինքն՝ սիրոյ պատգամը ապրել ինչպէս Քրիստոսն է պատուիրում. «Միրեցէք միմեանց ինչպէս ես ձեզ սիրեցի, այդպէս դուք սիրեցէք միմեանց» (Յովհ. 13, 34-35):



## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐԵՎԵԼԵԱՆ ԵՐՐՈՊԱՅԻ

ARMENIAN CATHOLIC ORDINARIATE OF ARMENIA, GEORGIA AND EASTERNE EUROPE

Սիրելի եւ հարազատ եղբայրակիցներ եւ գործակիցներ, մի՛ ընդունեք այս նամակը որպէս յորդորական քարոզ, եւ ո՛չ էլ՝ որպէս վերելից իջած բարոյական դաս: Հովուական այս Նամակն ա՛յլ բան չէ, քան միայն՝ առիթ յիշելու եւ ձեզ էլ յիշեցնելու, որ պարզ ծառան եմ Քրիստոսի Եկեղեցու եւ ձեր, որպէսզի հաւատացեալների առաջ միասնական ջանքերով պարզենք եւ հարթենք դէպի Քրիստոսի նոր պատուիրանն առաջնորդող ճանապարհը:

### ՔՐԻՍՏՈՍԻ ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ ՀԱԻԱՏԱՑԵԱԼՆԵՐԻ ԿԵԱՆՔՈՒՄ

Անտարակոյս, դուք եւ ես կանչուած ենք իւրայատուկ առաքելութեան, որ է՝ վկայել Քրիստոսին եւ առաջնորդել մեզ յանձնուած հօտը: Այս պարտականութիւնը ծանր եւ մեծ է. միաժամանակ, սակայն, վեհ ու վսեմ: Ինչպէ՞ս չանսալ եւ չնուիրուել այսպիսի պատուի, որին կանչուել ենք, եւ անձնուրացութեամբ չլծուել վասն Քրիստոսի: Ի՞նչ արժէք ունեն աշխարհիկ շահերն ու պատիւները նման աստուածային կոչման դիմաց:

Աստծոյ ժողովուրդը ծարաւի է լսելու, տեսնելու եւ գործնականօրէն շփուելու Քրիստոսի հետ, Նրա Առաքեալների հետ ապրելու համար այն երանութիւնները, որոնք քարոզեց Քրիստոսը: Այսօր մենք ենք այն առաքեալները, որոնք պէտք է փաստեն մեր Փրկչի քարոզած երկնային երանութիւնները: Ու դուք եւ ես միասին, գիտակից ենք եւ գիտենք, թէ ի՛նչ է ակնկալում մեզնից: Տատանուելու ժամանակ չկայ. Քրիստոսի նոր պատուիրանը կա՛մ անմնացորդ կերպով է գործադրում, կա՛մ էլ՝ բնաւ չի գործադրում:

Ընտրութիւնը մերն է եւ ժամանակը կարճ է: Քրիստոսի նոր պատուիրանը միայն քարոզչութեան նիւթ չէ, այլ վկայութիւն է եւ զոհողութիւն: Սբ. Ֆրանչիսկոսի կեանքից է այս դէպքը, երբ իր վզից մի պարան կապած, իր աշակերտին հրամայում է քաշել իրեն Ասսիզիի փողոցներով, իսկ երբ տուն են վերադառնում եւ աշակերտը հարցնում է այդ արարքի իմաստը, Սուրբը պարզունակ պատասխանում է. «Քարոզեցի»:



## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐԵՎԵԼԵԱՆ ԵՐՐՈՊԱՅԻ

#### ARMENIAN CATHOLIC ORDINARIATE OF ARMENIA, GEORGIA AND EASTERNE EUROPE

Թող որ մենք էլ, այս օրինակից ներշնչուած, գնանք վկայելու մեր ժողովրդի դիմաց եւ նրանց հրաւիրենք ապրելու Յիսուսի նոր պատուիրանը. «Միրեցէք միմեանց»: Այո՛, սերն է կենդանութեան աղբիւրը, Աստուած մեզ սիրեց եւ մինչեւ իսկ Իր Միածին Որդին տուեց որպէս Փրկիչ սատանայի որոգայթներից: Ես վստահում եմ աստուածային նախախնամութեանն ու շնորհին, որոնք մինչեւ օրս առաջնորդեցին ձեզ առաքելական կեանքում, իսկ այսօր ինձ էլ հրաւիրեցին ձեզ միանալու այս սրբազան առաքելութեան մէջ, սիրոյ նոր պատուիրանի մէջ ամրապնդուած քայլելու համար: Ուստի խնարհաբար հայցում եմ ձեր աղօթքները: Աղօթենք միմեանց համար, որպէսզի կարողանանք ասել. «Անպիտան ծառաներ ենք, կատարեցինք այն՝ ինչ պարտաւոր էինք կատարելու»:

Այս տողերը եզրափակելով եւ Առաքեալների Մայրը հանդիսացող Աստուածածնի բարեխօսութիւնը հայցելով, ձեզ եւ ձեր համայնքներին շնորհում եմ իմ Առաքելական Օրհնութիւնը: Ամէն:

06 Փետրուար 2012

Քանաքեռ, Երեւան